# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի №2309-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի №1715–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 187 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԱՌԱԾ 35,10 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 51, 08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Սունդուկյան փողոց, 187 հասցեագրությամբ հաշվառած 35,10 քառակուսի մետր մակերեսով հանրային բնակելի ֆոնդի տանը և դրա փաստացի զբաղեցրած 51,08 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 187/4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

14.09.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի №2308Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 11/10 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №11072023-08-0031) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, չափագրման արտոնագիր ունեցող «Մինասյան Մարինե Լուկաշենի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ղ. Ղուկասյան փողոց, 11/10 հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №11072023-08-0031) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 148.53 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 11/10 ՀՈՂԱՄԱՍ**
2. 17.24 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Ղ. ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 11/11 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի №2307Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 2 (ՎԿԱՅԱԿԱՆ №07092020-08-0025) ԵՎ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 2/2 (ՎԿԱՅԱԿԱՆ №07092020-08-0026) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Զարուհի Մկրտչյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №18982 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Կ. Դեմիրճյան փողոց, 3-րդ նրբանցք 2 (վկայական №07092020-08-0025) և Կ. Դեմիրճյան փողոց, 3-րդ նրբանցք 2/2 (վկայական №07092020-08-0026) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 1 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2023 թվականի №2306-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 1820,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0233-0001, 0004, 0005) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ գտնվող 1820,0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0233-0001, 0004, 0005) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑ, 8 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՉՅԱ ՀՄԱՅԱԿԻ ԹՈՍՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«14» սեպտեմբերի 2023 թվական N 2305 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 30-ին, ժամը 11:50-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Հնոցավան 4 շարք, տուն 29, անձնագիր՝ AT 0497025) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 18-ին կազմված, քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանի կողմից Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Ս. Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի օգոստոսի 18-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանի կողմից Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 18-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից Գյումրի քաղաքի, Հոնցավան 4 շարք, տուն 29 հասցեում առանց համապատասխան թույլտվության կատարվել է ինքնակամ շինարարական աշխատանք, մասնավորապես՝ կառուցվել է նախամուտք, այսինքն, քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է օրենսգրքի 48-րդ հոդվածով:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանը հրաժարվել է արձանագրության կրկնօրինակը ստանալուց:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 18-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ նախամուտքը կառուցել է դեռևս 1996 թվականին, որը օգտագործվում է որպես սանհանգույց:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի սեպտեմբերի 07-ին կազմվել է արձանագրություն այն մասին, որ քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից վերացվել են ինքնակամ շինարարության հետևանքները և տարածքը բերվել է նախկին տեսքին:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37–րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 37-րդ, 247–րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Հրայր Հմայակի Թոսունյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Հրայր Հմայակի Թոսունյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Հրայր Հմայակի Թոսունյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Հրայր Հմայակի Թոսունյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

Недействительная подпись

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» սեպտեմբերի 2023 թվականի № 2304Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 15Ա ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №27022013-08-0385) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գենադի Հակոբյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №18890 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի, շինությունների բաժանման սխեմաները և հատակագծերը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ.

Գյումրի քաղաք, Մ. Խորենացու փողոց, 15ա հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №27022013-08-0385) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 1100 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 11/1 ՀՈՂԱՄԱՍ**
2. 400 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝ **ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 11/2 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ   Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«13» սեպտեմբերի 2023 թվականի №2303-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 200,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0336-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 200,0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0336-0001) տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 17/16 ՀՈՂԱՄԱՍ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Х Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇԽԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«13» սեպտեմբերի 2023 թվական N 2302-Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 12:50-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք"Գյումրի, Ալավերդյան փողոց, տուն 28, անձնագիր՝ AU 0244823, տրված՝ 26.04.2021 թվականին, 064 կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 04-ին կազմված, քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2.ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Կ. Մովսիսյանը

իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի օգոստոսի 04-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 04-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից Գյումրի քաղաքի, Ալավերդյան 28 հասցեում առանց համապատասխան թույլտվության կատարվել է ինքնակամ շինարարական աշխատանք, մասնավորապես՝ տան արևելյան հատվածում համայնքապատկան մայթի վրա կատարվել է ինքնակամ շինարարություն, որը խանգարում է ներկայիս փողոցաշինական աշխատանքներին, քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է օրենսգրքի 154-րդ հոդվածով:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանն արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 04-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ շինարարական աշխատանքները կատարվել են դեռևս 1976 թվականին, նշեց նաև՝ ինքնակամ կառույցը կառուցել են, քանի որ չեն ունեցել կոմունալ հարմարություններ: Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանը պատրաստակամություն հայտնեց մեկ ամսվա ընթացքում վերացնել հետևանքները:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանը տեղեկացրեց, որ ունի հաշմանդամ տղա, ով վիրավորում է ստացել 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմի ժամանակ, քաղաքացի՝ Աշխեն Գրիգորյանը խնդրեց տույժի մասով վարչական վարույթը կարճել:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 37-րդ, 247-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2-րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին սույն որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

13.09.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇԽԵՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«13» «սեպտեմբերի» 2023 թվական N 2301 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 12:55-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Ալավերդյան փողոց, տուն 28, անձնագիր՝ AU 0244823, տրված՝ 26.04.2021 թվականին, 064 կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 04-ին կազմված, քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Կ. Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի օգոստոսի 04-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ

հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 04–ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից Գյումրի քաղաքի, Ալավերդյան 28 հասցեում առանց համապատասխան թույլտվության կատարվել է ինքնակամ շինարարական աշխատանք, մասնավորապես՝ տան արևելյան հատվածում զավթել է համայնքապատկան մայթը՝ ինքնակամ կառուցելով շինություն առանց համապատասխան թույլտվության, քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է օրենսգրքի 48-րդ հոդվածով:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 04-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ պատրաստակամ է մեկ ամսվա ընթացքում վերացնել հետևանքները, ինչպես նաև հայտնեց, որ ունի հաշմանդամ տղա, ով վիրավորում է ստացել 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմի ժամանակ, քաղաքացի՝ Աշխեն Գրիգորյանը խնդրեց տղայի մասով կարճել վարույթը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը,

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 21-րդ և 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը տույժի մասով կարճելու հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 48-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին սույն որոշումը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Աշխեն Խաչատուրի Գրիգորյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

13.09.2023

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 13» սեպտեմբերի 2023 թվականի N 2300 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 1200-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի թվով 11 (տասնմեկ) կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալների միջև բաշխելու, «Գյումրու ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության աշխատանքների համակարգումը Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալին վերապահելու և Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի N 2200-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1200-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) վերնագրում և 1-ին կետում «11 (տասնմեկ)» թիվը և բառը փոխարինել «12 (տասներկու)» թվով և բառով,

2) 1-ին և 2-րդ կետերի 1-ին ենթակետում «համայնքի անշարժ գույքի կառավարման բառերը փոխարինել «անշարժ գույքի կառավարաման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Պապիկյանին, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարաման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Գրիգորյանին, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գոռ Սարոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբերի 2023 **թվականի** N2299Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 5/11 ՀԱՍՑԵԻ 192.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կ. Հալաբյան № 5/11 հասցեի 192.0 (մեկ հարյուր իննսուներկու ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողայինօրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Կ. Հալաբյան № 5/11 հասցեի 192.0 (մեկ հարյուր իննսուներկու ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

11.09.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ՀՐԱՉՅԱ ՀՄԱՅԱԿԻ ԹՈՍՈՒՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**«12» «սեպտեմբերի» 2023 թվական N 2298 –Ա**

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 30–ին, ժամը 11:45-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք"Գյումրի, Հնոցավան 4 շարք, տուն 29, անձնագիր՝ AT 0497025) ներկայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 18–ին կազմված, քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանի կողմից Օրենսգրքի 154–րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Ս. Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի

օգոստոսի 18-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 18-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից Գյումրի քաղաքի, Հնոցավան 4 շարք, տուն 29 հասցեում առանց համապատասխան թույլտվության կատարվել է ինքնակամ շինարարական աշխատանք, մասնավորապես՝ կառուցվել է նախամուտք, այսինքն, քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է օրենսգրքի 154-րդ հոդվածով:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանը հրաժարվել է արձանագրության կրկնօրինակը ստանալուց:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, պատշաճ ծանուցումը ապահովվել է փոստային ծառայության միջոցով:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 18-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Քաղաքացի՝ Հրաչյա Համայակի Թոսունյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ նախամուտքը կառուցել է դեռևս 1996 թվականին, որը օգտագործվում է որպես սանհանգույց:

Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 37-րդ, 247–րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, 55–րդ, 58–րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Հրաչյա Հմայակի Թոսունյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

## ՔԱՂԱՔԱՑԻ ԼԱՈՒՐԱ ԳԱՐԻԿԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12» «սեպտեմբերի» 2023 թվական N 2297 –Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի սեպտեմբերի 08–ին, ժամը 11:30-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Սունդուկյան 132 ա, անձնագիր՝ AS 0639407 տրված՝ 07.06.2019 թվականին 064–ի կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 10–ին կազմված, քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի կողմից Օրենսգրքի 154–րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Ս.Մովսիսյանը

իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի օգոստոսի 10-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի կողմից Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 10-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի կողմից Գյումրի քաղաքի, Սպանդարյան փողոցի, թիվ 42 հասցեում, ճակատային մասում առանց համապատասխան թույլտվության կատարվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, մասնավորապես՝ պատուհանը վերածել է դռան, այսինքն քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով:

Գործի նյութերում առկա է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ՝ Ա.Մարտիկյանի թիվ 01//07255-2023 գրությունը ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին: Համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ա.Մարտիկյանի թիվ 01//07255-2023 գրության, Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 42 հասցեում գտնվող կառույցը հանդիսանում է տեղական նշանակության պատմամշակութային հուշարձան /պետցուցիչ՝ 7.7.1.4794/:

Քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, ծանուցագիրը ստացել է առձեռն:

Վարչական վարույթի լսումների ժամանակ քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանը հայտնեց, որ շինարարական աշխատանքները կատարվել են 2023 թվականի հունիսի ամսվա սկզբներին, մինչև հունիսի 20-ը բերվել է ավարտական տեսքի:

Քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 10-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

Օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու հանգամանք:

### 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 21-րդ, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2-րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը տույժի մասով կարճել:
2. Պարտավորեցնել քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանին սույն որոշումը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում վերացնել ինքնակամ շինարարության հետևանքները, Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 42 հասցեում գտնվող պատմամշակութային հուշարձանը բերել նախկին տեսքին:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
5. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Լաուրա Գարիկի Սուքիասյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

12.09.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբերի 2023 թվականի N 2296-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ « ԿԱՐՄԻՐ ԳԼԽԱՐԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԷԴՄՈՆԴԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Շուշանիկ Էդմոնդի Ստեփանյանի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի « Կարմիր Գլխարկ մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Շուշանիկ Էդմոնդի Ստեփանյանին տրամադրել 2022 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2023 թվականի սեպտեմբերի 14–ից

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդի մասը ՝10 աշխատանքային օր՝ 2023 թվականի սեպտեմբերի 14–ից 28-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Շուշանիկ Էդմոնդի Ստեփանյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մեթոդիստ Օֆելյա Մկրտչի Մելքոնյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուշանիկ Էդմոնդի Ստեփանյանին և Օֆելյա Մկրտչի Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<12>> սեպտեմբերի 2023 թվականի N 2295-Ա

## <<ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՏԱՇԵՍԻ ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Խաչատուր Արտաշեսի Երանոսյանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. << ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խաչատուր Արտաշեսի Երանոսյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից:
2. Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 30 աշխատանքային օր՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից հոկտեմբերի 23-ը ներառյալ:
3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Խաչատուր Արտաշեսի Երանոսյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսմասվար Էդուարդ Լենդրոշայի Ալագյոզյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Խաչատուր Արտաշեսի Երանոսյանին և Էդուարդ Լենդրոշայի Ալագյոզյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբերի 2023 թվականի № 2294-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի №1716–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 187 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԱՌԱԾ 32,66 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 51, 55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Սունդուկյան փողոց, 187 հասցեագրությամբ հաշվառած 32,66 քառակուսի մետր մակերեսով հանրային բնակելի ֆոնդի տանը և դրա փաստացի զբաղեցրած 51, 55 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 187/3 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբերի 2023 թվականի №2293-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱԹԵՆԻԿ ՍՄԲԱՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՍՊԱՐՏԱԿԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 4 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սաթենիկ Սմբատյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №18888 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Քաղաքացի Սաթենիկ Սմբատյանին պատկանող Գյումրի քաղաք, Սպարտակի փողոց, 1-ին նրբանցք, 4 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ Ք., ՍՊԱՐՏԱԿԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 4/3 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ**

12.09.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

## ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՏՈՒՇ ԼԵՎԻԿԻ ԹՈՒԹԽԱԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«12» «սեպտեմբերի» 2023 թվական N 2292 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 24-ին, ժամը 11:55-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Կ.Հալաբյան փողոց, շենք 72, բնակարան 16, անձնագիր՝ AR 0662338 տրված՝ 16.04.2018 թվականին 064-ի կողմից) բացակայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 02-ին կազմված, քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի կողմից Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցներ՝ Ա. Մովսիսյանը և Կ.Մովսիսյանը իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս, 2023 թվականի

օգոստոսի 02-ին հայտնաբերել և օրենսգրքի 9-րդ, 251-րդ, 254-րդ և 255-րդ հոդվածներով սահմանված կարգով կազմել են քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի վկողմից Օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն:

2023 թվականի օգոստոսի 02-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի կողմից Գյումրի քաղաքի, Մուսայելյան 81 բ հասցեի հետնամասում համայնքապատկան հողամասի վրա, որը ըստ հատակագծի ճանապարհ է, տեղադրվել է թիթեղյա ավտոտնակ,այսինքն քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 48-րդ հոդվածով:

Քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանը արձանագրության կրկնօրինակը ստացել է, ստանալու փաստը հավաստվում է նրա կողմից կատարված ստորագրությամբ:

Քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանը վարչական վարույթի լսումների օրվա, տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, ծանուցագիրը քաղաքացու կողմից ստացվել է առձեռն:

Քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանը վարչական վարույթի լսումների ժամանակ ընդունեց, որ թիթեղյա ավտոտնակը տեղադրվել է իր կողմից դեռևս 1976 թվականին, երկրաշարժից հետո եղել է բնակելի տարածք, դիմացը ունեցել է կոմունալ հարմարություններ, որը ներկայումս քանդված է: Քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանը հայտնեց նաև, որ զղջում է և պատրաստակամ է իր միջոցների հաշվին ազատել համայնքապատկան հողամասը, որի համար խնդրեց տրամադրել ժամանակ:

Քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանը կողմից վարչական իրավախախտում կատարելու հանգամանքները ապացուցված են 2023 թվականի օգոստոսի 02-ին պատշաճ կարգով կազմած արձանագրությամբ և կից ներկայացված նյութերով:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի սեպտեմբերի 07-ին կազմվել է արձանագրություն այն մասին, որ քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի կողմից կատարված իրավախախտման հետևանքները վերացվել են:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը,
2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր լիազորությունների շրջանակներում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ

սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Նկատի ունենալով վերոգրյալը, գտնում եմ, որ առկա է օրենսգրքի 33–րդ 1-ին և 2-րդ մասերով և Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) կետով սահմանված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանք:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 281-րդ հոդվածի, 282-րդ հոդվածի 2–րդ կետի, 283-րդ, 286-288-րդ, 298-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42–րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) կետով, 55–րդ, 58–րդ հոդվածի 1–ին կետով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների դրույթներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:
4. Սույն որոշումը կարող է գանգատարկվել քաղաքացի՝ Կատուշ Լևիկի Թութխալյանի կողմից որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում՝ վարչական, կամ դատական կարգով:

12.09.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» սեպտեմբերի 2023 **թվականի** N 2291-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ N 92 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 346.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 25.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ 0.72 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մխիթարյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր N 409 տրված 12.06.2023թ.) Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց N 92 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 346.96(երեք հարյուր քառասունվեց ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործում է 25.9(քսանհինգ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա 0.72(զրո ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մխիթարյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի և 22.1 կետով հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մխիթարյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 26-ին N 13273 թվագրմամբ) հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023XENLPS և 2023NRDF72 ծածկագրերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մխիթարյանի (ծնված 1965 թվականի մարտի 23-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց N 92 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 25.9(քսանհինգ ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա 0.72(զրո ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Արմեն Վոլոդյայի Մխիթարյանին պատկանող Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց N 92 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 346.96(երեք հարյուր քառասունվեց ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.09.2023

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» սեպտեմբերի 2023 թվականի N 2259Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-ԻՆ ՏՐՎԱԾ N88/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գոռ Հարությունյանին Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց №44 հասցեով բնակելի տան մանսարդային հարկի կառուցման համար 2023 թվականի մայիսի 10-ին տրվել է N88/23 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 3/երեք/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 2/երկու/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2023 թվականի մայիսի 10-ին տրված N88/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 2/երկու/ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

X

**2023թ. ք.Գյումրի**

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ու Մ

«11» սեպտեմբերի 2023 **թվականի** N2289Ա

### 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՏՐՎԱԾ N18/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառուցապատող «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց №64 հասցեում սառնարանային կառույցի վերակառուցման համար 2022 թվականի մայիսի 16-ին տրվել է N18/22 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2022 թվականի մայիսի 16-ին տրված N18/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

11.09.2023

X ________________ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» սեպտեմբերի 2023 **թվականի** N 2288-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ՓՈՂ. 22 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 46,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Հովակիմյանին պատկանող (հիմք՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիր N 857 տրված 17.10.2019թ.) Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 46,5( քառասունվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Հովակիմյանինը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի և 22.1 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Հովակիմյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 11-ին N16831 թվագրմամբ )՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Հովակիմյանի պատկանող Գյումրի քաղաքի Մեքենավարների փողոց N 22 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 46,5(քառասունվեց ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.09.2023

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«11» «սեպտեմբերի» 2023 թվական N 2287-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 07-Ի N 1969-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու, իրավախախտման հետևանքները վերացնելուն պարտավորեցնելու մասին» N 1969-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 07-ի «Վարչական իավախախտման վերաբերյալ գործի վարույթը վարչական տույժի մասով կարճելու, իրավախախտման հետևանքները վերացնելուն պարտավորեցնելու մասին» N 1969-Ա որոշման, մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 2-րդ բաժնից հանել «Այն դեպքում երբ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, սույն հոդվածի առաջին մասով սահմանված կարգը կարող է կիրառվել նաև վերադասության կարգով բողոքարկման վարույթի ընթացքում» նախադասությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Անահիտ Ամատունու Քոչարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

11.09.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

«11» սեպտեմբերի 2023 **թվականի** N 2286-Ա

### 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՏՐՎԱԾ N85/20 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տիգրան Ռոբերտի Պետրոսյանին Գյումրի քաղաքի Մ. Խորենացի փողոց №46/2 և Մ.Խորենացի փողոց №46/5 հասցեներում կիսակառույց բնակելի տան լրակառուցման, փակ լողավազանի, կաթսայատան, մետաղական հովածածկի և պարսպի կառուցման համար 2020 թվականի սեպտեմբերի 2-ին տրվել է N85/20 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 3/երեք/ տարի:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 24/քսանչորս/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2020 թվականի սեպտեմբերի 2-ին տրված N85/20 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 24/քսանչորս/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» սեպտեմբերի 2023 **թվականի** N 2285Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ N 10/3 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ 8.91 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 8.91 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՐԹԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոցի N 10/3 հասցեի շինությանը կից 8.91(ութ ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 8.91(ութ ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հարթակ:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023RGTXAQ ծանուցագիրը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Պարույր Սևակի փողոցի N 10/3 հասցեի շինությանը կից 8.91(ութ ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 8.91(ութ ամբողջ իննսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հարթակը համարել համայնքի սեփականություն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունը և հողամասը վարձակալությամբ տրամադրելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Համլետ Խաչատրյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Աստիճանները թողնել որպես ինքնակամ:

11.09.2023

x

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԼԱՆԱ ԵՐՎԱՆԴԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«11» «սեպտեմբերի» **2023 թվական N 2284 -Ա**

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի օգոստոսի 30-ին-ին ժամը՝ 11:30 Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, Սվետլանա Երվանդի Մկրտչյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, տնակ 207/288, անձնագիր՝ AS 0220988, տրված՝ 08.06.2018 թ., 016 կողմից) ներկայությամբ, օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 21-ին կազմած՝ Սվետլանա Երվանդի Մկրտչյանի կողմից օրենսգրքի՝ 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի օգոստոսի 21-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Լ. Գրիգորյանի, Ա. Ղազարյանի և Ս. Խաչատրյանի կողմից կազմվել է արձանագրություն այն մասին, որ Սվետլանա Երվանդի Մկրտչյանը Գյումրի քաղաքի, Շիրակացի փողոց, 66 շենքի հարևանությամբ՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր:

Քաղաքացի՝ Սվետլանա Երվանդի Մկրտչյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ արդեն իսկ վերացրել է վարչական իրավախախտման հետևանքները, ինչպես նաև նշեց՝ այսուհետ բացառելու է նմանօրինակ դեպքերի կրկնումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2–րդ կետերի համաձայն՝վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում.

## 3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3–րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33–րդ հոդվածի 1–ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով , 293–րդ հոդվածի 3–րդ ենթակետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Սվետլանա Երվանդի Մկրտչյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. Սվետլանա Երվանդի Մկրտչյանին իրազեկել՝ հետագայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել Սվետլանա Երվանդի Մկրտչյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սվետլանա Երվանդի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» սեպտեմբերի 2023 **թվականի** N 2283-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԼԲԵՐՏԻ ԵՂՈՅԱՆԻՆ (26/36 ՄԱՍ), ՍԵԴԱ ԱԼԲԵՐՏԻ ՍԱՌՋՅԱՆԻՆ (5/36 ՄԱՍ) ԵՎ ՎԱՐԴՈՒՇԱՂ ԱԼԲԵՐՏԻ ՍԱՐՋՅԱՆԻՆ (5/36 ՄԱՍ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱՐԱՑ 4-ՐԴ ՇԱՐՔ № 10 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 67.16 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 394.40 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Իզաբելլա Ալբերտի Եղոյանին (26/36 մաս), Սեդա Ալբերտի Սառջյանին (5/36 մաս) և Վարդուշաղ Ալբերտի Սարջյանին (5/36 մաս) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի հողամասին կից ավել օգտագործում է 394.4 (երեք հարյուր իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 67.16 (վաթսունյոթ ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023NQNRVL, 2023DBAJT3, 2023YKMTEA ծածկագրերով մուտքագրման տեղեկանքները և քաղաքացի Իզաբելլա Ալբերտի Եղոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 24-ին № 9831 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացիներ Իզաբելլա Ալբերտի Եղոյանի (26/36 մաս) (ծնված 1976 թվականի դեկտեմբերի 24-ին), Սեդա Ալբերտի Սառջյանի (5/36 մաս) (ծնված 1965 թվականի նոյեմբերի 06-ին) և Վարդուշաղ Ալբերտի Սարջյանի (5/36 մաս) (ծնված 1959 թվականի մայիսի 12-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300.0 (երեք հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2. Քաղաքացիներ Իզաբելլա Ալբերտի Եղոյանին (26/36 մաս), Սեդա Ալբերտի Սառջյանին (5/36 մաս) և Վարդուշաղ Ալբերտի Սարջյանին (5/36 մաս) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի տան հողամասին կից սահմանված չափից ավել օգտագործվող 94.4 (իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Իզաբելլա Ալբերտի Եղոյանին (26/36 մաս), Սեդա Ալբերտի Սառջյանին (5/36 մաս) և Վարդուշաղ Ալբերտի Սարջյանին (5/36 մաս) տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 645130 (վեց հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 94.4 (իննսունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):

4. Քաղաքացիներ Իզաբելլա Ալբերտի Եղոյանին (26/36 մաս), Սեդա Ալբերտի Սառջյանին (5/36 մաս) և Վարդուշաղ Ալբերտի Սարջյանին (5/36 մաս) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Այգաբաց 4-րդ շարք № 10 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 67.16 (վաթսունյոթ ամբողջ տասնվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Իզաբելլա Ալբերտի Եղոյանին, Սեդա Ալբերտի Սառջյանին և Վարդուշաղ Ալբերտի Սարջյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.09.2023

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**